



ՈՐՈՇՈՒՄ N 15

14 ապրիլի 2021 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 15-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 15-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության (հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1408-Ն որոշմամբ) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնադրության 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

‘4. ԵՊՀ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ լիազոր մարմին):’:

2) Կանոնադրության 18-րդ կետի 13-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

‘13) իրեն օգտագործման իրավունքով տրամադրված գույքը հանձնելու վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:’:

3) Կանոնադրությունը լրացնել 20.1.-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

‘20.1 ԵՊՀ-ին անհատույց օգտագործման տրամադրված գույքն ուղղակի ձևով, մրցույթով կամ աճուրդով վարձակալության տրամադրման նպատակով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, ռեկտորի առաջարկությամբ, հայտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե, որը պետք է ներառի՝

1) գույքի վարձակալության տրամադրման հիմնավորումը, սահմանափակումները և վարձակալության տրամադրվող գույքի օգտագործման նպատակը.

2) վարձակալության տրամադրվող գույքի նկարագիրը՝ ներառյալ գտնվելու վայրը, մակերեսը, հարկը, վիճակը և վարձակալության առաջարկվող ժամկետը՝ համապատասխան հիմնավորմամբ.

3) վարձակալության տրամադրվող անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության տրամադրվող տարածքի հատակագիծը.

4) առկայության դեպքում՝ վարձավճարի չափի վերաբերյալ առաջարկությունը.

5) վարձակալության տրամադրվող գույքի ամսական վարձավճարի շուկայական գնահատված արժեքը՝ ըստ գնահատման մասին հաշվետվության.

6) առկայության դեպքում՝ դիմումատուի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հայտի քննարկումը և որոշման կայացումն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

Սահմանված կարգով վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: ՀՀ ֆինանսների նախարարությունը տվյալ բյուջետային տարվա վերջում տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից տրամադրում է լիազոր մարմնին ԵՊՀ-ին փոխանցելու համար, որպես ԵՊՀ-ի կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում:’:

4) Կանոնադրությունը 42.-րդ կետը լրացնել 16.1.-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

‘16.1) ԵՊՀ-ին անհատույց օգտագործման տրամադրված գույքը ռեկտորի առաջարկությամբ ուղղակի ձևով, մրցույթով կամ աճուրդով վարձակալության տրամադրման հայտի ներկայացումը.՝:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նիստը նախագահող՝

Մ. Մալխասյան